

2023-2024 ՈՒՍՏԱՐԻ
ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳ
ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՐԿԱՅԻ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼԻ ԹԵՍԱՅԻՆ
ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԸ և ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

9- ԲԴ ԴԱՍԱՐԱՆ

Տևողությունը՝ **90** րոպե (1,5 ժամ):

Գնահատումը կատարվում է **20** միավորանոց համակարգով:

Բոլոր առաջադրանքներն ունեն մեկ ճիշտ պատասխան:

Ճիշտ պատասխանը գնահատվում է 1(մեկ) միավոր:

1. Ո՞րն էր Մուշեղ Մամիկոնյանի վեհանձն արարքը:

ա) Հռեանդեայի ճակատամարտում հռոմեական զորավար Պետտսին է ներում է շնորհում:

բ) **Ձիրավի ճակատամարտում պարտված պարսկական կողմին է վերադրվում պարսից արքային կանանոցը:**

գ) Վաղարշապատի ճակատամարտում ներեց մազքութների թագավոր Սանեսանին և թույլ տվեց, որ երկրից անարգել հեռանա:

դ) Ձիրավի ճակատամարտում պարտված պարսկական արքայի կանանոցը վերցրեց իր անձնական հովանու ներքո:

2. Ո՞րն էր միջազգային մարդասիրական իրավունքի ձևավորման հիմնական պատճառը:

ա) **Պատերազմների արհավիրքները մեղմելը**

բ) Խաղաղ բնակչությանը պաշտպանելը

գ) Երեխաներին և ծերերին պաշտպանելը

դ) Պատերազմների գոյությունը բացառելը

3. Ի՞նչ ստեղծեց Դավիթ Բեկը Սյունիքում իր զինակիցների հետ 1720-ական թվականների կեսերին:

ա) Նետաձիգ գնդեր

բ) Ռազմական ստորաբաժանումներ

գ) Առանձին ստորաբաժանումներ

դ) **Զինվորական խորհուրդ**



4. Տեղագրական քարտեզի պայմանական ո՞ր նշանն է պատկերված

- ա) Ջրադացներ
- բ) Տոթ
- գ) Բոլոր ուղղություններով ճանապարհ կա
- դ) Նավատորմեր

5. Ո՞րքան է «ԿԱ-74» ավտոմատի գնդակի սկզբնական արագությունը:

- ա) 1000 մ/վ
- բ) 700 մ/վ
- գ) 900 մ/վ
- դ) 750 մ/վ

6. Տարբերանշանում զինվորական Ո՞ր կոչումն է:



- ա) Մայոր
- բ) Գեներալ-մայոր
- գ) Գեներալ
- դ) Կրտսեր լեյտենանտ

7. Ինչի՞ց է կախված մարտի դաշտում զինվորի գործողությունների հաջողությունները:

- ա) Հակառակորդի գործողությունները ճիշտ կռահելուց:
- բ) Հարձակմանը նախապատրաստվելու աստիճանից:
- գ) Հետախուզական տվյալները արդյունավետ օգտագործելուց:
- դ) մարտավարաֆիզիկական լավ պատրաստվածությունից:

8. Որքա՞ն է զինվորների միջև հեռավորությունը մարտակարգ կազմելիս:

- ա) 6-7 մ (8-12 քայլ)
- բ) 7-8 մ (9-13 քայլ)
- գ) 5-6 մ (6-11 քայլ)
- դ) 6-8 մ (8-12 քայլ)

9. Ինչպե՞ս է որոշվում հրաձգային զենքի կրակայաին հզորությունը բնորոշող կրակի խտությունը:

- ա. Ճակատի 1 մետրի վրա 1 րոպեում արձակված գնդակների թվով
- բ. Ճակատի 2 մետրի վրա 1 րոպեում արձակված գնդակների թվով
- գ. Ճակատի 1 մետրի վրա 2 րոպեում արձակված գնդակների թվով
- դ. Ճակատի 0,5 մետրի վրա 1 րոպեում արձակված գնդակների թվով

10. Ինչե՞րով է բնորոշվում մոտոհրաձգային ջոկի հնարավորությունները:

- ա. Կրակային հզորությամբ և ճկունությամբ:
- բ. Կրակային հզորությամբ և գորաշարժային /խուսանավելու/ ունակությամբ:
- գ. Խուսանավելու և մանևրելու ունակությամբ
- դ. Կրակային հզորությամբ և հակառակորդին մանիպուլացնելու կարողությամբ:

11. Ի՞նչ ֆունկցիա է իրականացնում ժանդարմերիան Իրանի Իսլամական հանրապետությունում:

- ա. Ոստիկանական, պետական սահմանների և հույժ կարևոր օբյեկտների պահպանության և զինապարտների գորակոչի կազմակերպման և իրականացման ֆունկցիա:
- բ. Պետական սահմանների և հույժ կարևոր օբյեկտների պահպանության և զինապարտների գորակոչի կազմակերպման և իրականացման ֆունկցիա:
- գ. Պետական սահմանների և հույժ կարևոր օբյեկտների պահպանության ֆունկցիա:
- դ. Ձինապարտների գորակոչի կազմակերպման և իրականացման ֆունկցիա:

12. Թվարկվածներից որո՞նք են համագորային մարտի կարևոր խնդիրներից:

- ա. Հակառակորդի տանկերի և զրահամեքենաների դեմ պայքարը:
- բ. Հակառակորդի զենքերը առգրավելը:
- գ. Հակառակորդին զինաթափելը:
- դ. Դիրքեր գրավելը:


13. Որքա՞ն է ԿԱ-74 ավտոմատի գնդակի մահաբեր կարողությունը

- ա. 1300 մ. **բ. 1350 մ.** գ. 1250 մ. դ. 1500 մ.


14. Ե՞րբ է հաստատվել զինվորական երդման տեքստը:

- ա. 1991 թ. դեկտեմբերի 27-ին բ. 1992 թ. հունվարի 28-ին
- գ. 1991 թ. փետրվարի 23-ին դ. 1991 թ. սեպտեմբերի 21-ին

15. Համապատասխանեցնե՛լ:



16. Համապատասխանացնել:



17. Ինչի՞ օգտագործման վրա է հիմնված ավտոմատի աշխատանքը:

- ա. Վառողային գազերի օգտագործման վրա:
- բ. Փողանցքից դեպի գազամխոց ուղղված վառողային գազերի էներգիայի օգտագործման վրա:
- գ. Գազերի օգտագործման վրա:
- դ. Փողանցքում փամփուշտը դուրս մղող գազերի օգտագործման վրա:

18. Ո՞րն է ավտոմատի փողի տրամաչափը:

- ա. Փողի երկու հակադիր ակոսների միջև ընկած տարածությունը:
- բ. Փողի ակոսների և դաշտերի միջև ընկած տարածությունը:
- գ. Փողի երկու համադիր դաշտերի միջև ընկած տարածությունը:
- դ. Փողի երկու հակադիր դաշտերի միջև ընկած տարածությունը:

19. Ո՞րն է փակադակի ֆունկցիան:

- ա. Փամփուշտը մղում է փամփշտանոց, հարվածում է հրապատիճին և փամփշտանոցից հանում է պարկուճը:
- բ. Փամփուշտը մղում է փամփշտանոց, փակում է փողանցքը, հարվածում է հրապատիճին և փամփշտանոցից հանում է պարկուճը:
- գ. Փակում է փողանցքը և հարվածում հրապատիճին:
- դ. Փամփշտանոցից հանում է պարկուճը:

20. Մագնիսական սլաքի ցույց տված ուղղությունը, որն անցնում է կանգնած կետով, կոչվում է.

- ա. Մագնիսական հորիզոնական
- բ. Մագնիսական միջօրեական
- գ. Մագնիսական ազիմուտ
- դ. Մագնիսական ուղղություն